

(Աշտ. Ը. Օձն. 140): Սոյն ենթադրու-  
թիւնս հաւանականութեան կը տանի Մխ.  
Ապարանեցւոյ տրտունջն անոնց դէմ՝ որ  
«գծածկոց սեղանոյն (եկեղեցւոյ) եւ զկա-  
հից սրբութեանցն ածեն ի գործ ընտանեաց»  
(Խե, Իե): Եւ ի՞նչ բանի կընային գործա-  
ծել զայն տան մէջ՝ քան թէ համանման  
ծառայութեան կերակրոյ սեղանին վրայ.  
Եւ զոր չպիտի առնուին՝ եթէ այդպիսի  
ծածկոյթ մը սովորական չլինէր նաեւ  
ճաշի սեղանին:

Յ. - Բազմակիս: — Այսպէս կ'անուա-  
նէ Մանդակունին ազնուականաց նստա-  
բանը (61), որուն կը ձայնակցին նաեւ  
ուրիշներ (Ոսկ. Մտթ. Բ, 67. Խոր. 142.  
Փաւս. 207. Պտմ. Աղ. 100), որոցմէ  
Փաւստոս կը կոչէ նաեւ «բազմակիս» (67):  
Անոր գետնէն բարձրութիւնը տեսանք Ման-  
դակունւոյն վկայութեան մէջ, զոր կը  
հաստատէ Եղիշէ եւս, կոչելով տիկնանցը  
«բարձրագահք տաճարաց» (174), որոյ մէջ  
զգալի է թէ շքեղութիւնը եւ թէ առաւե-  
լութիւնը սովորական աթոռոց հասակէն:

Գալով ուրիշ հանգամանաց, Յունաց ու  
Հռովմայեցւոց մէջ մերթ միապաղաղ ու  
կիսարուոր է այն, եւ մերթ քառակուսի՝ եւ  
երեք միահար երեսներէ ձեւացած, բաց  
թողլով մէկ երեսը՝ ծառայութեան համար: